

# Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

**1922 հունվար 1** Տեղի է ունենում Երևանի քաղաքի հանդիսավոր բացումը:

**հունվար 4** ՀԽՍՀ խորհուրդների առաջին համագումարը հաստատում է ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը:

**հունվար 22** Վախճանվեց պետական գործիչ, ազգերի լիգայի հիմնադիր Վիկտոր Ջեյմս Բրայսը: Նա աշխատում էր Վիլհամ Գլադստոունի օրոք, գրում էր իրավագիտության և քաղաքագիտության վերաբերյալ հոդվածներ: Ջեյմս Բրայսը բարձրաձայն դադապարտում էր թուրքական կառավարության կողմից իրագործված հայկական ցեղասպանությունը: (Ծնվ. 1838թ.-ին):

**հունվար 26** Երևանում բացվում է առաջին պետական դրամատիկական թատրոնը (1937 թվականից՝ Գ. Սունդուկյանի անվան):

**հունվար 26** Բացվում է ՀԿ(Բ)Կ առաջին համագումարը:

**հունվար 30** Երևանում բացվում է ՀԽՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայիների պատգամավորական խորհուրդների առաջին

**փետրվար 3** ՀԽՍՀ սովետների առաջին համագումարը հաստատեց ՀԽՍՀ առաջին սահմանադրությունը:

**փետրվար 19** Թիֆլիսում բացվում է Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը:

**մարտ 4** ՀԽՍՀ ժողկոմխորհուրդը ընդունում է դեկրետ ուղղագրության ռեֆորմի մասին:

**մարտ 12** Թիֆլիսում տեղի է ունենում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների լիազոր-կոնֆերենցիան, որը հիմք է դնում Անդրկովկասյան Ֆեդերացիային:

**մարտ 24** Բացվում է ՀԽՍՀ պետական բանկը:

**ապրիլ 9** Երևանում բացվում է

Անդրկովկասի արևմտահայ աշխատավորների համագումարը:

**հունիս 2** Երևանում լույս է տեսնում «Մաճկալ» գյուղացիական օրաթերթի առաջին համարը:

**հուլիս 13** Թիֆլիսում ցայանվեց Ականավոր հեղափոխական գործիչ Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյան):

**հոկտեմբեր 28** ՌՍՖՍՀ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննում է Խորհրդային Հայաստանին ֆինանսական օգնություն ցույց տալու հարցը և որոշում Հայաստանին բաց թողնել 1,5 միլիոն ռուբլի (ոսկով)՝ գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ և անասուններ ձեռք բերելու համար:

**նոյեմբեր 7** Երևանում բացվում է պետական հանրային գրադարանը (1925 թվականից՝ Ալ. Մյասնիկյանի անվան):


**նոյեմբեր 7** Երևանում բացվում է պետական թանգարանը՝ հնագիտական, ազգագրական, պատմական, գեղարվեստական, հեղափոխական և արխիվային բաժիններով:

**նոյեմբեր 7** Երևանի համալսարանի մանկավարժական ֆակուլտետի բազայի վրա բացվում է ՀԽՍՀ լուսժողկոմատի մանկավարժական ինստիտուտը, որը 1924/25 ուստարում կրկին միանում է պետական համալսարանին:

**դեկտեմբեր 10** Բացվում բացվում է Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը, որը որոշում է ԱՍՍՀՄ-ն վերակազմել ԱՍՖՍՀ-ի (հաջորդ համագումարները տեղի ունեցան 1924-ին., 1925-ին, 1927-ին, 1929-ին, 1931-ին, 1935-ին):

**դեկտեմբեր 14** Ծնվեց վաստակավոր երգչուհի Գոհար Գասպարյանը Կահիրեում:

**դեկտեմբեր 30** Մոսկվայում բացվում է Խորհուրդների համամիութենական I համագումարը, որը կազմում է Խորհրդային Հանրապետությունների Միությունը՝ ԽՍՀՄ-ը:



(Շարունակելի)

**ԱՄՆ Կոնգրեսի ավելի քան 200  
անդամներ կոչ են արել Նախագահ  
Բուշին ճշտորեն բնութագրել Հայոց  
ցեղասպանությունը**

ԵՐԵՎԱՆ - ԱՄՆ 208 օրենսդիր ապրիլի 20-ին դիմել է ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշին Հայոց ցեղասպանությունը «ցեղասպանություն» անվանելու կոչով, հայտնել է ՀՀ-ի Հայ Դատի Ամերիկայի հանձնախումբը:

178 կոնգրեսական եւ 30 սենատոր Բուշին հղված առանձին նամակներով հորդորել են նրան, որ ապրիլի 24-ի իր ամենամյա ուղերձում ջարդերն անվանի «ցեղասպանություն»:

2000թ.-ի փետրվարին այն ժամանակ նախագահի թեկնածու Ջորջ Բուշը խոստացել էր ընտրվելու դեպքում ճշտորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Սակայն ընտրվելուց հետո նա մշտապես խուսափել է օգտագործել ցեղասպանություն բառը՝ փոխարենը օգտագործելով զանազան խուսափողական արտահայտություններ, թուլացնելով պատմական իրողության իրավական հետեւանքների ազդեցությունը:

«Մենք մեծապես շնորհակալ ենք այս հզոր նամակի համար, որի տակ ստորագրել են երկու կուսակցության անդամներն էլ եւ որով կոչ է արվում նախագահին իր՝ ապրիլի 24-ի ուղերձում ճանաչել Հայոց ցեղասպանությունը», - ասել է ՀՀ-ի Հայ Դատի Ամերիկայի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

**ԱՄՆ-ի հայերը պահանջում են Հայոց  
ցեղասպանության պատմությունը  
դասավանդել դպրոցներում**

ԵՐԵՎԱՆ - Միացյալ Նահանգների քաղաքական գործիչները եւ տարբեր համայնքներ ներկայացնող կազմակերպությունները միանում են ամերիկահայերի՝ ԱՄՆ-ի հանրակրթական դպրոցներում Հայոց ցեղասպանության պատմությունը դասավանդելու համար պայքարին, գրել է «Բոստոն գլոբ» հեղինակավոր թերթը:

Բոստոնի դատարանում այժմ լսվում է Մասաչուսեթս նահանգի դպրոցներից մեկի ուսուցչի եւ աշակերտի, ինչպես նաեւ թուրքական կազմակերպությունների

հայցը, որոնք պահանջում են պատմության դասագրքերում Հայոց ցեղասպանությանը վերաբերող հատվածում ավելացնել նաեւ թուրքական տեսակետը:

Ըստ թերթի՝ ապրիլի 21-ին Բոստոնի դատարանի առջեւ Մասաչուսեթսի նահանգի հայկական կազմակերպություններն անցկացնելու են բողոքի ցույց, որին մասնակցելու են նաեւ տեղի հրեական եւ իռլանդական համայնքների ներկայացուցիչները, Մասաչուսեթսի գլխավոր դատախազը եւ փոխնահանգապետը, որոնք երկուսն էլ պայքարում են նահանգապետի պաշտոնի համար:

Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, այս օրերին Հայոց ցեղասպանությանն է անդրադարձել նաեւ «Բոստոն Հերալդ» թերթը, որը մեջբերում է Հարվարդի Ցեղասպանությունների ուսումնասիրման ինստիտուտի փորձագետ Հելեն Ֆեյնի կարծիքը. «Դա ցեղասպանություն էր ցեղասպանության բոլոր չափանիշներով: Նույնիսկ վիրավորական եւ ծիծաղելի է վիճել այն հերքողների հետ»:

**Վրացահայերը կնշեն Հայոց  
ցեղասպանության 91-րդ տարեկիցը**

ԵՐԵՎԱՆ - Ապրիլի 24-ին Վրաստանի հայ բնակչությունը ամբողջ աշխարհի հայության հետ կնշի Հայոց ցեղասպանության 91-րդ տարեկիցը:

Վրաստանի հետ համագործակցության հայկական կենտրոնի եւ «Նոր սերունդ» վրացահայերի միության նախաձեռնությամբ կանցկացվի բողոքի գործողություն Վրաստանում Թուրքիայի դեսպանատան առջեւ: Միջոցառմանը կմասնակցեն նաեւ վրացական ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ծրագրվում են նաեւ հետեւյալ միջոցառումները՝ պատարագ հայկական Սբ Գեորգ եկեղեցում, հիշատակի երեկո Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական դրամատիկական թատրոնում, հոգեւոր երգի էկոմենիկ երեկո Սբ Գեորգ եկեղեցում, որին կմասնակցեն Վրաստանի բոլոր քրիստոնեական հարանվանությունների եկեղեցական երգչախմբերը: Միջոցառումները կավարտվեն երթով Սբ Գեորգ եկեղեցուց մինչեւ Նոր Էջմիածին եկեղեցի:

**Կուբանի Սլավյանսկի  
իշխանությունները եւ  
հասարակայնությունը դեմ են  
Թուրքիայի անդամակցությանը ԵՄ-ին**

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցին էր նվիրված Կուբանի Սլավյանսկ քաղաքի հասարակական-քաղաքական կազմակերպությունների կլոր սեղանը, որը կայացել է ապրիլի 19-ին Սլավյանսկի պետական մանկավարժական ինստիտուտում:

Կլոր սեղանի մասնակիցներին ողջույնի ուղերձ էր հղել ՌԴ Պետական դումայի պատգամավոր Սերգեյ Շիշկարյովը («Միացյալ Ռուսաստան» խմբակցություն):

Ինչպես հաղորդում է «Նոյյան տապանը», վկայակոչելով Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթը, կլոր սեղանի ընթացքում, որին մասնակցել են Կուբանի Սլավյանսկի եւ Սլավյանսկի շրջանի վարչակազմի եւ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քննարկվել են հետեւյալ հարցերը. Հայոց ցեղասպանությունը որպես մարդկության եւ մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն, Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչումը եւ Թուրքիայի իրավական պատասխանատվությունը, այդ հանցագործության պաշտոնական ճանաչումը եւ դատապարտումը Թուրքիայի կողմից, պանթուրքիզմի գաղափարախոսությունը որպես իրական սպառնալիք Եվրոպայի եւ աշխարհի համար, Հայոց ցեղասպանության հետեւանքների արդարացի վերացման ուղիները, Հայ Դատի լուծումը միջազգային իրավունքի հիման վրա: Միջոցառման մասնակիցներին ցուցադրվել է «Երկիր-Մեդիա» (Հայաստան) հեռուստաընկերության պատրաստած «Ես մեղադրում եմ» ֆիլմը:

Քաղաքային վարչակազմի անունից կլոր սեղանի մասնակիցներին դիմել է Կուբանի Սլավյանսկի վարչակազմի ղեկավարի տեղակալ Տատյանա Կովալյովան: Քաղաքային իշխանությունների նախաձեռնությամբ ապրիլի 24-ին Կուբանի Սլավյանսկի դպրոցներում կանցկացվի հիշատակի ժամ՝ նվիրված ողբերգական այդ օրվան, իսկ տեղի հեռուստաալիքով կհեռարձակվի «Ես մեղադրում եմ» ֆիլմը եւ ռեպորտաժ կլոր սեղանի մասին:


Կլոր սեղանի արդյունքում ընդունվել է բանաձեւ, որում, մասնավորապես, ասված է. «Կրասնոդարի երկրամասի Կուբանի Սլավյանսկ քաղաքի հասարակայնության 2006 թ. ապրիլի 19-ի կլոր սեղանի մասնակիցները, հիմնվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արեւմտյան Հայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին, <...> նշելով, որ հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացումն իր պատմական հայրենիքում իրագործվել է Միջին Ասիայից մինչեւ Բալկաններ, ներառյալ՝ Պոլլոժին, Ուրալը, Ղրիմը, Հարավային եւ Հյուսիսային Կովկասը, ընդգրկող Մեծ Թուրանի ստեղծման պանթուրքիստական գաղափարների իրականացման նպատակով, դատապարտում են 1915-1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իրենց ցավակցությունն են հայտնում հայ ժողովրդին եւ ապրիլի 24-ը դիտում են որպես Ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

Կրասնոդարի երկրամասի Կուբանի Սլավյանսկի հասարակայնության կլոր սեղանի մասնակիցներն անհնար են համարում Թուրքիայի մուտքը եվրոպական ժողովուրդների ընտանիք, քանի դեռ հանցագործությունը, որ կատարել է Թուրքիայի ղեկավարությունը 1915 թ. հայ բնիկ բնակչության դեմ, չի ճանաչվել եւ դատապարտվել Թուրքիայի ներկայիս ղեկավարության կողմից, եւ հորդորում են եվրոպական տերությունների ղեկավարներին կոչ անել Թուրքիայի իշխանություններին ճանաչելու Հայոց ցեղասպանությունը»:

Բանաձեւը ստորագրել են Սլավյանսկի շրջանի վարչակազմի ղեկավար, «Միացյալ Ռուսաստան» կուսակցության Սլավյանսկի շրջանի քաղաքական խորհրդի քարտուղար, Սլավյանսկի շրջանի կազակական զորքի ատաման Վլադիմիր Գոնչարովը, Կուբանի Սլավյանսկի վարչակազմի ղեկավարի տեղակալ Տատյանա Կովալյովան, Պատերազմի եւ աշխատանքի վետերանների Սլավյանսկի շրջանային խորհրդի նախագահ Յուրի Բոբիրենկոն, «Մերիդիան» («Միջօրեական») ինտերնացիոնալ բարեկամության ակումբի նախագահ Անահիտ Մելտոնյանը, Ռուսաստանի հայերի «Երկրամաս» թերթի գլխավոր խմբագիր Տիգրան Թավադյանը, Սլավյանսկի շրջանի Հայկական մշակույթի ընկերության նախագահ Վյաչեսլավ Նիկոլեւը, «Համշեն» գիտամշակութային տեղեկատվական կենտրոնի նախագահի տեղակալ Միխայիլ Կուզոբը, Նովոռոսիյսկ քաղաքի «Լույս» հայկական մշակութային ընկերության պատվավոր անդամ Էդուարդ Պողոսովը եւ այլք:

Նոր, Օգոստոսի Գիրք

# ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ ՏՈՆԵՐԸ՝ ԴԱՍԱԳՐՔԱՅԻՆ ՄԱՏՈՒՑՄԱՍԲ



Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր

Հոգեւոր անվտանգության խնդիրն այսօր ոչ միայն Հայաստանում կամ հայերի առաջ է կանգնած, այլև առհասարակ ողջ մարդկության: Համաշխարհայնացման ալիքը սպառնում է քաղաքակրթական անցյալ դարերի ստեղծած բազմազանության համանվազին եւ այս համատեքստում առաջնահերթն ազգային արժեքների աստիճանական մոտեցումը կամխելն է, որովհետեւ հակառակն անխուսափելիորեն վտանգում է որեւէ ժողովրդի ինքնությունն ու ապագան՝ կասեցնելով նրա գոյընթացը:

«Հայ ժողովուրդը, որն աշխարհին հայտնի է տարօրինակ հոգեկերտվածքով, որպես ավանդապահ ու մշակութասեր ժողովուրդ, իր հայրենիքում, անկախության պայմաններում տարերայնորեն կանգնեց ինքնատարման փաստի առաջ», այսպես է արձանագրում Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս. Չուլջյանը վերջերս լույս տեսած «Հայաստանյան

առաքելական Սուրբ եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական տոներ, հիշատակի օրեր» գրքի առաջաբանում:

Որքան էլ ժամանակներն անբարենպաստ են, ազգային, կրոնական, մշակութային, բարոյական, ընտանեկան-կենցաղավարական ավանդական արժեքները պահպանողները կան եւ անուն են իրենց գործը:

Հայ գրերի 1600-ամյակին եւ Հայոց մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված այս գիրքը մեր իրականության մեջ առաջին փորձն է հայոց համազգային տոները եւ հիշատակի օրերը ոչ միայն վերարժեւորելու, այլև դրանց խորհուրդը մեկնաբանելու առումով, նաեւ՝ ներկայիս փորձությունները դիմակայելու միտվածությամբ: Մտահղացողները՝ Հայ առաքելական եկեղեցու Գուգարաց թեմը եւ Գայանե Անտոնյանը նկատի ունենալով հոգեւոր եւ ազգային տոների դերը հատկապես երիտասարդ սերնդի գիտակցական դաստիարակության վրա, գիրքը կազմել են դասագրքային սկզբունքով, որը մատուցման ձեւով ծառայելու է իբրեւ օժանդակ ձեռնարկ՝ հանրակրթական դպրոցներում վերջին տարիներին, բարեբախտորեն, առարկայական պարտադիր ուսուցման համակարգ ներմուծված «Հայ եկեղեցու պատմության առարկայի»: Հայաստանի ազգային, պետական, եկեղեցական տոները ներկայացված են օրացուցային հերթականությամբ, օրինակ, հունվար՝ Նոր տարի կամ Կաղանդ, Սբ. Ծնունդ եւ Աստվածահայտնություն, Մկրտություն, Տնօրինեք, Հայոց բանակի օր եւ այդպես հաջորդող ամիսները, որով գիրքը կարելի է համարել ընդարձակ տոնացույց՝ հստակ մեկնաբանություններով:

Ի՞նչ է տոնը եւ ի՞նչ խորհրդանշական արժեք ու նշանակություն ունի: Աշխարհիկ իրողությունների եւ իրադարձությունների սիմվոլիկան մարդկանց հավաքական գիտակցության մեջ արտահայտվում են տոների, հանդիսությունների ձեւով, որոնք իրենց ճանաչողական նշանակությամբ հանդերձ, որոշակիորեն արժեւորում են նաեւ պատմական, ազգային հիշողությունները:

Եկեղեցական տոներն արտահայտություն են մարդկային հավատի, աստվածաճանաչողության, աստվածապաշտության եւ նմանաբնույթ երեւութների, իսկ վաղ անցյալից փոխանցված տոնական սովորույթները քրիստոնեության մեջ ձեռք բերած նոր բովանդակություն են ի հայտ բերում: Եկեղեցական տոների գաղտնիմաստները, նրանց խորհրդի մեկնաբանությունները, կարծում ենք, կօգնեն ընթերցողին, քրիստոնյա հայերին մեր ազգային եկեղեցու հետ ավելի մերձենալու: Կարելի է նաեւ հոգեւոր կյանքի որոշ

իրողությունների ճանաչելիության պարագան: Տոնացույցն ունի բարոյակրթական նշանակություն, կարելի է դասագրքային սկզբունքով յուրաքանչյուր մասի սեղմ ամփոփումները: Գիրքը տպագրվել է Ամերիկայի Արեւելյան թեմի «Ձգոն եպս. Տեր-Յակոբյան» հիմնադրամի մեկենասությամբ:

Մ. ԲԱՐԱԼՅԱ

## «ԵԿԵՂԵՑԻՆ ՔԱՆԴԵՑԻՆ, ՈՐ ՄԶԿԻԹ ԿԱՌՈՒՑԵՆ»

Այս վերնագրով թուրքական «Միլլիթեթ» թերթը հոկտեմբերի 19-ի համարում տեղեկացնում է, որ Դիարբեքի Քուլփի գավառի գյուղերից Արգունում պահպանման ենթակա հայկական եկեղեցին քանդվել է, որ տեղում մզկիթ կառուցվի: Մզկիթի կառուցումն առանձին քաղաքացիների բողոքի պատճառով կասեցված է: Ըստ «Միլլիթեթի», նախ հանրապետական շրջանում հայերին պատկանող Արգուն գյուղի պատմական այս եկեղեցու քարերը նախապես քանդվել էին՝ տներ կառուցելու նպատակով, ինչի հետեւանքով եկեղեցին ավերվել էր եւ դառնալով ծիսակատարությունների համար ոչ պիտանի՝ լքվել:

Այնուամենայնիվ, մշակութային արժեքների եւ բնապահպանության խորհուրդը կիսավեր եկեղեցին եւ կից հայկական գերեզմանոցն ընդգրկել էր պահպանման ենթակա պատմական հուշարձանների ցանկում: Սակայն շինարար Քերեմ Էմրեմ, որը նույն գյուղի բնակիչ է, համազուղացիների հավանությամբ հիմնահատակ քանդում է եկեղեցին, ինչպես նաեւ գերեզմանոցի մի մասը եւ սկսում մզկիթ կառուցել: Եկեղեցու քարերն օգտագործվում են որպես մզկիթի հիմնաքար:

Մզկիթի շինարարությունն սկսվել է մայիսի 10-ին: Սակայն որոշ քաղաքացիների բողոքի հիման վրա Քուլփի քաղաքապետարանն ու Դիարբեքի թանգարանի քաղաքային վարչությունը միջամտել են, պարզելով, որ շինարարությունն ապօրինի է, եւ թեկուզ ուշացումով կասեցման որոշում ընդունել:

Գյուղապետ Սադըք Թուրանը մզկիթի ապօրինի շինարարության առնչությամբ «Միլլիթեթին» ասել է. «Ես փորձեցի կանխել եկեղեցու տեղում մզկիթի կառուցումը: Մզկիթի համար այլ տեղ հատկացրի եւ ասացի, որ գյուղում արդեն գործող երկու մզկիթ կա: Դրանով հանդերձ, շինարար Էմրեմ գյուղացիներին հավաքելով, ուղարկեց մեր տուն: Նրանք ինձ մեղադրեցին, թե ես մզկիթին դեմ եմ, հետեւաբար հայ պետք է լինեմ, որից հետո չկարողացա դիմադրել ճնշումներին եւ տեղի տվեցի»:

Օգտվելով առիթից նշենք, որ վերոհիշյալ Քուլփի հայկական խուլփ բնակավայրն է, որը մինչեւ 1915 թ. վարչականորեն ենթակա էր Մուշ գավառին:

Յ. ՉԱՔՐՅԱՆ

## Ա. Ղուկասյան. «Լեռնային Ղարաբաղի զիջումները կախված են Ադրբեջանի զիջումներից»

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ, 19 ԱՊՐԻԼԻ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: «Առանց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հնարավոր չէ որեւէ հարց լուծել, եւ կարծում եմ, որ դա հասկանում են բոլորը, այդ թվում նաեւ Ադրբեջանը», - այսօր լրագրողներին ասաց ԼՂՀ նախագահ Արկաղի Ղուկասյանը՝ անդրադառնալով ԼՂՀ բանակցություններին Լեռնային Ղարաբաղի մասնակցության խնդրին:

Միաժամանակ նա նկատեց, որ ղարաբաղյան կողմի՝ բանակցություններին մասնակցելը ԼՂՀ-ից չի կախված: Միջազգային խաղաղապահ ուժերի հնարավոր տեղակայման մասին խոսելը Ա. Ղուկասյանը վաղ համարեց, քանի որ «այդ մասին պետք է հակամարտող կողմերը համաձայնության գան, դա այսօրվա հարց չէ»: Անդրադառնալով փոխզիջումների մասին հարցին, ԼՂՀ նախագահը չցանկացավ նշել Ղարաբաղի կողմից հնարավոր զիջումները, քանի որ «դրանց մասին պետք է խոսվի բանակցային սեղանի շուրջ»: Սակայն Ա. Ղուկասյանը նկատեց, որ «Լեռնային Ղարաբաղի զիջումները կախված են Ադրբեջանի զիջումներից»: «Միակողմանի զիջումներ չեն լինելու, - նշեց ԼՂՀ նախագահը: - Մենք պատրաստ ենք փոխզիջումների, իսկ դա նշանակում է զիջումներ երկու կողմից»:

Ինքնորոշման հանրաքվեի հնարավոր անցկացման վերաբերյալ նա նկատեց, որ Լեռնային Ղարաբաղն ինքնորոշվել է շատ վաղուց: «Ղարաբաղը հանրաքվե է անցկացրել, սակայն այդ հանրաքվեի արդյունքներն աշխարհը չի ճանաչել: Եթե մենք այսօր հնարավորություն ունենք, որ աշխարհը եւ Ադրբեջանը ճանաչի այդ հանրաքվեի արդյունքները, կարծում եմ, դա քննարկելու թեմա է», - ասաց Ա. Ղուկասյանը՝ կարծիք հայտնելով, որ Ադրբեջանը պատրաստ չէ հարցի կարգավորմանը, եւ այդ պատճառով անընդհատ հարցը ձգձգում է:

## Ղարաբաղյան հակամարտության հիմքում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքները չհարգելն է

ԵՐԵՎԱՆ (ԵՐԿԻՐ) - ԼՂՀ Ազգային ժողովում անցկացվում են խորհրդարանական լսումներ «Ղարաբաղյան հիմնախնդիր. կարգավորման հեռանկարները» թեմայով, որին, բացի ԼՂՀ ԱԺ պատգամավորներից, մասնակցում են ՀՀ ԱԺ պատգամավորական պատվիրակությունը՝ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանի գլխավորությամբ, փորձագետներ եւ քաղաքագետներ Հայաստանից, ԼՂՀ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Ինչպես տեղեկացնում է REGNUM գործակալությունը, լսումները բացել է ԼՂՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը: Լսումների մասնակիցներին ողջունել է խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլյանը: Նա, մասնավորապես, ընդգծել է, որ Արցախն ի սկզբանե եղել է մնում է աշխարհի հայերի ուշադրության կենտրոնում:

Նա կարելորել է ԼՂՀ քաղաքական ուժերի, խորհրդարանական խմբակցությունների եւ խմբերի դիրքորոշումներն ու կարծիքները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ, հնարավոր զարգացումները հիմնախնդրի համատեքստում: Աշոտ Ղուլյանի խոսքերով՝ լսումները լուրջ նախապայման կլինեն ապագայում հակամարտության արմատական հարցերի քննարկման համար:

«ԼՂՀ ժողովրդի եւ իշխանությունների համար հիմնախնդրի լուծման մեկնակետ է հանրաքվեի արդյունքները, որոնց համաձայն՝ Արցախի հայությունը միանշանակ «այո» է ասել անկախությանը՝ որպես ռազմավարություն ընտրելով անկախ պետականության շինարարությունը: Բնական է՝ այդ նպատակին հասնելուն է ուղղված ամբողջ քաղաքական համակարգի, այդ թվում՝ ԼՂՀ ԱԺ-ի գործունեությունը», - ասել է Աշոտ Ղուլյանը:


Այնուհետեւ խոսել է ԼՂՀ արտգործնախարար Գեորգի Պետրոսյանը, որը նշել է, որ Ղարաբաղյան հակամարտության հիմքում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքները չհարգելն է: Գեորգի Պետրոսյանը ընդգծել է, որ «Ադրբեջանի իշխանություններին ուղղված քաղաքական պահանջին ի պատասխան Լեռնային Ղարաբաղը ստացավ էթնիկական գտումներ»:

Նրա խոսքերով՝ պաշտոնական Բաքուն միշտ էլ փորձել է ինքնորոշման խնդիրը իրավական հարթությունից տեղափոխել ռազմական հակամարտության հարթություն:

ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը նշել է, որ այսօր բանակցությունների սեղանին դրված են առաջարկներ, որոնք նախատեսում են հակամարտության հետեւանքների վերացում, այլ ոչ դրա լուծում Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքի հարգման հիման վրա:

Նա կարծիք է հայտնել, որ միջնորդներն այսօր պահանջում են լուծել խնդիրը Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում՝ ի վնաս Լեռնային Ղարաբաղի ժողովրդի շահերին, ինչը «բարոյական չէ»: ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը ափսոսանք է հայտնել, որ կարգավորման գործընթացում միջազգային միջնորդները արհամարհում են Լեռնային Ղարաբաղում 1991 թվականին անցկացված անկախության հանրաքվեի արդյունքները:

Պատասխանելով լսումների մասնակիցների հարցերին նախարարն ասել է, որ Ղարաբաղյան կողմը մշտապես հետեւում է Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ ընթացող բանակցություններին: Ընդ որում՝ նա ընդգծել է, որ դա դեռեւս չի նշանակում, որ Ղարաբաղյան կողմը համաձայն է բոլոր հարցերում: Նախարարը նաեւ նշել է, որ «Ղարաբաղյան խաղաքարտը» չպիտի շահարկվի անձնական նպատակներով:



## «Գուանտանամո»-ի ադրբեջանցի բանտարկյալը եղել է բեն Լադենի թարգմանիչը

ԵՐԵՎԱՆ - Ամերիկյան «Գուանտանամո» ռազմակայանի բանտարկյալների թվում կա Ադրբեջանի մի քաղաքացի: Բանտարկյալների Պենտագոնի կայքում հրապարակված ցուցակում Ադրբեջանի քաղաքացի Փոլադ Սիրաջելը 69-րդն է «Մասուդ» կողային անունով, տեղեկացնում է REGNUM գործակալությունը:

Մինչ ցուցակի հրապարակումը ադրբեջանական ՋԼՄ-ներում հայտնվել են տեղեկություններ, որ ադրբեջանցի բանտարկյալի անունը Փոլադ Սիրաջել է, նա 28 տարեկան է, ծնվել է ապրել է Բաքվում, մասնագիտությամբ թարգմանիչ է:

ANS հեռուստաալիքի տվյալներով՝ Սիրաջելը ամերիկյան զինծառայողների կողմից ձերբակալվել է 2001 թվականի նոյեմբերին աֆղանական Մազարի-Շարիֆ քաղաքում եւ 2002-ի հունվարին տեղափոխվել է «Գուանտանամո»: Մեկնաբանելով ադրբեջանցի բանտարկյալի մասին տեղեկատվությունը՝ Ադրբեջանի ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության քաղաքականության վարչության պետ Թայիր Թաղիզադեն «Թուրան» գործակալությանը հայտնել է, որ Ադրբեջանի դեսպանատունը կապեր ունի ԱՄՆ կառավարության հատուկ աշխատանքային խմբի հետ:

Բացի այդ, Ադրբեջանի իրավապահ մարմինները նույնպես աշխատանք են տանում այդ ուղղությամբ: Թաղիզադեի խոսքերով՝ ԱՄՆ-ում գոյություն ունի հատուկ կառույց՝ կազմված զինվորական արդարադատության երեք ներկայացուցիչներից: Այն պարբերաբար ուսումնասիրում է «Գուանտանամո»-ի բանտարկյալների գործերը: Հետաքննության արդյունքներից ելնելով՝ գործերը տեղափոխում են դատական ատյաններ կամ այդ մարդկանց արտաքսում են ԱՄՆ-ից:

Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության մամուլի ծառայության ղեկավար Արիֆ Բաբաևը, պատասխանելով լրագրողների հարցերին, ասել է, որ իրենք ոչինչ չգիտեն «Մասուդ» բանտարկյալի մասին: Միաժամանակ, նա նշել է, որ

Ադրբեջանը հակահարեկչական կոալիցիայի ակտիվ մասնակից է եւ այդ գործում օգնում է ԱՄՆ-ին: Իսկ դա նշանակում է, որ Ադրբեջանի անվտանգության նախարարությունը մտադրություն չունի նպաստել Փոլադ Սիրաջելի ազատ արձակմանը:


Ըստ ադրբեջանական ՋԼՄ-ների՝ Սիրաջելի մասին հայտնի է նաեւ այն, որ նա եղել է բեն Լադենի թարգմանիչը: Ինքը՝ Սիրաջելը, հարցաքննության ժամանակ ամերիկացիներին ասել է, որ Աֆղանստանում ուսումնասիրել է արաբերեն եւ Ղուրան: Որոշ տվյալներով՝ նա աշխատել է թալիբների տեխնիկական ապահովման ոլորտում, սակայն Սիրաջելը հարցաքննությունների ժամանակ հերքել է այդ ամենը:

## Արգենտինայի Սենատը որոշում է ընդունել Հայոց ցեղասպանության մասին

*Արգենտինայի Սենատը ներկայացրել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ապրիլի 19-ի իր որոշումը, որը ստորագրել են սենատորներ Սադին, Նայդենոֆը, Ջյուսթինիանին եւ Կուրլեթին:*

Ինչպես տեղեկացնում է ՀՀԴ Հայ Դատի Ամերիկայի հանձնախումբը, որոշման մեջ, մասնավորապես, նշվում է, որ Արգենտինայի Ազգային Սենատը դատապարտում է ցավակցում է հայերի դեմ Օսմանյան կայսրությունում իրագործած Ցեղասպանության կապակցությամբ, որի 91-րդ տարեկիցը կնշվի առաջիկա ապրիլի 24-ին:

Հայությունն ամեն տարի հիշատակում է այդ օրը, հարգանքի տուրք մատուցում նահատակներին ու աջակցում այն ընտանիքներին, որոնք ապրել ու ապրում են այդ ցավալի արարքի հետեւանքները: Նաեւ դատապարտում է շարունակական ժխտողականությունը, որը ծնունդ է տալիս ոճիրների կրկնությանը սնունդ տվող անպատժելիության:



## Կանադայի վարչապետը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

Կանադայի վարչապետ Սթիվեն Հարփերը հայտարարություն է արել, որով հստակորեն ճանաչել է Հայոց ցեղասպանության պատմական փաստը: Պատասխանելով լրագրողի հարցին՝ վարչապետն ասել է. «Նախորդ խորհրդարանում քվեարկություն է տեղի ունեցել: Եթե հիշում եք, խորհրդարանն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև: Մեր կուսակցությունը պաշտպանեց այդ բանաձևը, եւ մենք շարունակում ենք ճանաչել այդ խորհրդարանական բանաձևը»: ՀՀ-ի Հայ Դատի Կանադայի համձնախմբի նախագահ դոկտոր Վաղարշ Էիրամջյանը շնորհակալություն է հայտնել վարչապետին կանադահայ համայնքի անունից:

## Ըստ Սերժ Սարգսյանի՝ Ղարաբաղում խաղաղապահներ տեղակայելու մասին խոսելը վաղ է

*«Անընդհատ բարձրացնելով ղարաբաղյան հարցը՝ Ադրբեջանում, այդպիսով, փորձում են լուծել այլ ներքին քաղաքական հիմնախնդիրներ»,- «Կրասնայա զվեզդա» թերթին տված հարցազրույցում ասել է ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը:*

Ինչպես տեղեկացնում է REGNUM գործակալությունը, նախարարը ռուսական թերթին հիշեցրել է Ադրբեջանի նախագահի եւ պաշտպանության նախարարի այն հայտարարությունները, որ եթե Հայաստանը չհամաձայնի իրենց պայմաններին, ապա Ադրբեջանը ստիպված կլինի հարցը լուծել ռազմական ճանապարհով:

«Ավելին, այնտեղ կրկնապատկել են ռազմական բյուջեն, իսկ Ադրբեջանի նախագահը վերջերս հայտարարել է, որ այն կհասցնի միլիարդ դոլարի: Սակայն, խոստովանեն, դրանից շանտաժի հոտ է գալիս:

Պետք է ասեն, որ մենք չենք վախենում պատերազմից, սակայն դա չենք ցանկանում: 1994-ին Ռուսաստանի միջնորդությամբ համաձայնագիր է ձեռք բերվել ռազմական գործողությունների դադարեցման մասին: Այսօր մեր զորքերը գտնվում են շահավետ պաշտպանական վիճակում, եւ 12 տարվա ընթացքում մենք ինժեներական առումով լավ սարքավորել ենք մեր դիրքերը:

Միլիարդավոր դոլարները տվյալ դեպքում չեն օգնի: Հէ որ եթե մեծ ռազմական բյուջեներով հնարավոր լիներ սահմանել զորքերի մարտունակությունը եւ պատրաստվածությունը, ապա, կարծում են, բոլոր նավթային պետությունները վաղուց ամենամարտունակ բանակները կունենային: Սակայն դա այդպես չէ»,- մշել է Սերժ Սարգսյանը: Խոսելով ԵԱՀԿ հովանու տակ Լեռնային Ղարաբաղում միջազգային խաղաղապահ առաքելության հնարավորության մասին՝ Սերժ Սարգսյանը կասկած է հայտնել, որ «ինչ-որ տեղ լրջորեն զբաղված են խաղաղապահ գործողությունների նախապատրաստմամբ»: «Դրա համար հարկավոր է կողմերի համաձայնությունը կամ զոնե համաձայնության նախանիշեր: Այդ մասին կարելի կլինի խոսել միայն այն ժամանակ, երբ կողմերը համաձայնության կզան, եւ, իհարկե, դրանից հետո, հավանորեն, խաղաղապահների կարիք կլինի: Ցավոք, դեռեւս մեր եւ Ադրբեջանի միջեւ համաձայնություն չկա: Հետեւաբար խաղաղապահների մասին խոսնելն էլ վաղ է»,- ասել է ՀՀ պաշտպանության նախարարը:

«Կովկասում ցանկացած չկարգավորված հակամարտություն կարող է դետոնատորի դեր խաղալ. Հարավային Կովկասը շատ փոքր է, եւ այստեղ բոլոր երկրները կախված են միմյանցից: Այնպես, որ ռազմական գործողությունների վերսկսումը կարող է շատ բացասական հետեւանքներ ունենալ, այդ թվում՝ մեզ համար»,- հարցազրույցում հայտարարել է Սերժ Սարգսյանը՝ մեկնաբանելով Աբխազիայի եւ Հարավային Օսիայի շուրջ ստեղծված իրավիճակի ապակայունացման հնարավորությունը: Ինչպես տեղեկացնում է REGNUM գործակալությունը, խոսելով Վրաստանում տիրող իրավիճակի մասին, Սերժ Սարգսյանը ասել է, որ այդ երկրի անկայուն վիճակը ձեռնտու չէ Հայաստանին, քանի որ Վրաստանը միակ երկիրն է, որը Հայաստանը կապում է արտաքին աշխարհի հետ: Մյուս կողմից, ըստ նախարարի, ռազմական գործողությունները կարող են գայթակղել այլ երկրների՝ մասնակցել հակամարտությանը: